Պ Ա Յ Մ Ա Ն Ա Գ Ի Ր N 47

«04» «10» 2019թ.

«Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ը, որպես «Կատարող»՝ ի դեմս տնօրեն Կարապետ Շահբազյանի մի կողմից և ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայությունը, որպես ,,Պատվիրատու,,՝ ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Ա.Ղազարյանի, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

«Պատվիրատուն» հանձնարարում է, իսկ «Կատարողը» պարտավորվում է 2019թ. հոկտեմբերի 21-ին տրամադրել թատրոնի դահլիճը և բեմը՝ միջոցառում իրականացնելու նպատակով:

2.Պայմանագրի վճարման չափը

2.1 «Պատվիրատուն» պարտավորվում է «Կատարողին» վճարել 400000 դրամ / չորս հարյուր հազար դրամ/:

3. Կողմերի պարտավորությունները

3.1 «Պատվիրատուի» պարտականությունները՝

3.1.1 Միջոցառումը Պատվիրատուի մեղքով չկայանալու դեպքում վճարել տուգանք՝ 100000 դրամի չափով:

3.1.2 Հրապարակային կատարումների ընթացքում պարտադիր կարգով հնչեցնել ստեղծագործության տեքստի և երաժշտության հեղինակների անունները, իսկ առանց դադարի միջոցառումների ընթացքում, որտեղ հաղորդավարի կամ երգչի կողմից հնարավոր չէ հնչեցնել հեղինակների անունները՝ պարտադիր կարգով պետք է հանդիսատեսին բաժանված լինի միջոցառման ծրագրեր, որտեղ առկա լինեն ստեղծագործության անվանումը, տեքստի և երաժշտության հեղինակների անունները:

3.1.3 Համերգների և միջոցառումների ընթացքում պարտադիր է կենդանի կատարումը:

3.2 «Կատարողի» պարտականությունները՝

3.2.1 Ապահովել պայմանագրի 1. կետով սահմանված պարտավորությունները, կատարել որակով սպասարկում:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցություն /ֆորս-մաժոր/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց

հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 1/մեկ/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1 Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.3 Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագարման պահից և գործում է մինչև սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը:

5.4 Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

6. Կողմերի իրավաբանական հասցեները

«Պատվիրատու»	«Կատարող
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն	,,Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն,, ՊՈԱԿ
Քաղ. Երևան , Արշակունյանց 63 ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հհ 900011175016 ՀՎՀՀ 02204739	Քաղ.Երևան, Վազգեն Սարգսյան 7 Երևանի թիվ 1 ՏԳԲ, Հհ 900018001579 ՀՎՀՀ 02510974
ՔԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	ՏՆՕՐԵՆ
_____ Ա.ԴԱԶԱՐՅԱՆ	_____ Կ.ՇԱՀԲԱԶՅԱՆ